



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑՈՒ  
ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱԿԻ  
ԱՌԻԹՈՎ**

ՎԱԶԳԻՆ ԾԱՌԱՅՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ  
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՄ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐք  
ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅՆԱՅՐԱՐԱՏԵԱՆ  
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԵ  
ԷԶՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂԶՈՐՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ, ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ  
ԵՒ ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ

Աստուծոյ ողորմութեամբ, քանինինգ տարիներու ձեր կեանքն ու գործունէութիւնը՝ հոգևոր-քարոյական բարձունք մը հանդիսացաւ ամերիկահայոց պատմութեան մէջ, արժանի Մեր գնահատանքին և օրինութեան:

Ձեր կազմակերպութիւնը, թեմակալ առաջնորդներու և հոգևոր հովիներու հայրական ղեկավարութեան ներքն քառորդ դար շարունակ, ամերիկահայ երիտասարդութեան սրտին մէջ աշխատեցաւ վառ պահել Քրիստոսի Աւետարանի լոյսը, այնպէս հարազատ ու այնպէս պայծառ ինչպէս ան ճառագայթեց մեր նախնեաց սրտերուն մէջ, սերունդէ սերունդ, և պատմութեանը մէջ մեր ազգին:

Հայ ժողովուրդի քրիստոնէութիւնը, ոգեկան ուրոյն և վաւերական փորձառութիւններէն մին կը հանդիսանայ քրիստոնէայ աշխարհին մէջ: Ամելի քան տասնեւսկեց դարեր, հայ ժողովուրդն ու եկեղեցին, ժամանակներու յարա-

շարժ պայմաններու և յաճախ ահարկու փոթորիկներու ընդմշէն անցնելով, անաղարտ ու անփոփոխ պահպանած են ս. Թաղէռու և ս. Բարթողիմէռու առաքեալներէն, սուրբ Գրիգոր Լուսատորիչէն և մեր եկեղեցին երանեալ սուրբ բերէն իրենց կտակուած կրօնական հասատքը, դաւանանքը և բարդական ու մշակութային արժեքները: Սա բոլորը, այսօր մեզի ամենու համար, կը հանդիսանա ոգեկան անկորնեցէի ազգային ժառանգութիւն մը, որ ոչ միայն քիսանուշական ոգեկանութեան լուսաւոր կոթող մըն է պատմութեան բնմին վրայ, և ոչ միայն կը բնորոշէ հայ ժողովուրդի հոգեկան դիմագծութիւնը և անոր առաքելութիւնը անցեալի մէջ, այլ այդ ժառանգութիւնը կը մնայ հան մեր օրերուն և գայիք բոլոր ժամանակներուն համար, ամենալաւերական վէմը մեր հոգեոր-բարդական կեանքին և ամենակենաստու աղբիրը նոր, ստեղծարար իրագործուներու:

Այդ ժառանգութիւնը գերագոյն գրաւականն է մեր ազգային ներկայ ու ապագայ գոյատևաման ու առաքելութեան: Այդ ժառանգութեամբ է որ մեր ժողովուրդը իր ուսարտ կնքած է երկնքի հետ, յախտենականութեան հետ:

Աշխարհի ու ժողովուրդներու պատմական զարգացման ընթացքին, շատ գաղափարներ, կեանքի ձևեր ու տարագներ, կը յաջորդեն իրարու, բնորոշելով տուեալ ժամանակաշրջանն, սակայն կան ոգեկան արժեքներ որոնք յախտենական են և անփոփոխ ու ամէն ժամանակաշրջանն, այնքան արժէք կը ներկայացնի պատմութեան հորիզոնին վրայ, ինչքան կը կարողանայ, նոր համադրումով և նոր ճառագայթումով, այժմէականացնել յախտենականը:

Եւ ամէն ժամանակաշրջանն, կամ ամէն ժողովուրդ չէ որ կը յաջորդի այդ կատարին հասնի: Երբեմն ժամանակը կ'անցնի անքովանդակ ու աղքատ, երբեմն նոյնիսկ այլասերում հասնելու աստիճան: Այդ կը պատահի ոգեկան սովոր ժամանակաշրջաններուն, երբ մարդիկ նորոյաթ կը շիոյեն յառաջդմութեան հետ, շատախօսութիւնը, գիտութեան հետ, անկարգութիւնը՝ յեղափոխութեան հետ:

Մեր պարտականութիւնն է պատուեր տալ ձեզի, սիրելի երիտասարդներ, որ ձեր սիրու ու միտքը բանար յախտենական ճշմարտութիւններուն և մնայուն արժեքներուն, որոնց աղբիրներն են՝ Քրիստոսի Աւետարանը, մեր սուրբ եկեղեցւոյ ժառանգութիւնը և մեր ժողովուրդի ազգային մշակոյթի գանձարանը:

Քրիստու՝ տեսական յեղափոխութիւնն է մարդու կեանքին ու պատմութեան:

**Հայաստանեայց առաքելական եկեղեցին վէմն է մեր քրիստոնէական հասատքին իր աստուածակառոյց կեղրով՝ սուրբ Էջմիածնով:**

Հայ ժողովուրդի մշակութային ժառանգութիւնը խորապէս ու պայծառապէս քրիստոնէական է, ազգային ու համամարդկային միաժամանակ:

Անա այն հիմքերու վրայ ամուր ու անսասան կանգնած պշխարհին դիմաց, հայ քրիստոնէայ երիտասարդը ճակատարաց պէտք է ապրի մեր օրերու կեանքը, իր բնակած երկրի արդիսկան պայմաններուն մէջ, առանց հեռու կամ մեկուսացած մնալու մեր ժամանակները յուզող կացութիւններէն ու հարցերէն, զանոնք հասկանալով ու դատելով և անոնց հնանդէա գործօն կերպով իր վերաբերումը ճշտելով, յախտենական արժեքներու լոյսին ներքև:

«Սիրելիք, ոչ եթէ նոր ինչ պատուիրան գրեմ ձեզ, այլ զիին պատուիրանն զոր ի սկզբանէ ունիէիք, և ինչ պատուիրան՝ բանն է զոր լուարուք: Դարձեալ նոր պատուիրան գրեմ ձեզ՝ որ է ճշմարտի ի նմա և ի ձեզ, զի խաւարն անցանէ, և լոյսն ճշմարիտ արդէն իսկ երկի» (Ա. Յովհ. Բ. 7—8):

Այսօր. ձեր կազմակերպութեան կեանքի աշ համեմատոր հանգրուանին, Մենք՝ ձեր Հայրապետը և ձեր հոգևոր Հայրը, սուրբ Եջմիածնէն, անհուն սիրով ու կարօտով, ձեր բարեշան առաջնորդ գեր. տ. Թորգոն արքեպիսկոպոսի միջնորդութեամբ, ձեզի բոլորին կը բերեմք Մեր ողջոյնը և օրինութիւնը, հայցելով ձեզի՝ օգևականութիւնը Աստուծոյ և շնորհները սուրբ Հոգոյն, որպէսզի՝ քաջառողջ ապրիք և զօրանաք հոգուվ ու մարմնով, որպէսզի ձեր կեանքը վարէք ու գործէք՝ ձեր հայեացքները սկսուած յախտեան ճշմարտութիւններուն և արժէքներուն, որպէսզի մնաք արծանաւոր զարակները ձեր հայրերուն, միշտ ամուր կանգնած հայ ազգին ոգեկանութեան բարձունքներուն վրայ:

Դուք մեր ուրախութիւնն էք, դուք մեր լոյսն էք, դուք մեր ապագան էք, դուք մեր պարծանքն էք:

«Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց, և հպատակ կացէք նոցա, զի նոքա տքնին վասն ոգոց ձերոց՝ որպէս թէ համարս տալոց իցեն ընդ ձեր» (Երր. ԺԳ 17). ամէն:

Հայոց Ա

### ԵԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻՍ.ՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա կոնդակս ի 17-ը յունիսի

1971 փրկչական ամի,  
և ի տումարիս հայոց ՌԽՆԻ,  
ի մայրապանս սրբոյ Եջմիածնի

ՀՄՊ. 708

